# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ-ն ՀԳԴ-ԷԱՃԱՊՁԲ-26/3 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը |
|---|---|
| 23 | ՈՒսադիր՝ Ուսադիրներ բարձրագույն դասի՝ տոնական կիտելի համար՝ Հայաստանի Հանրապետության դատախազների դասային աստիճանների տարբերանշաններն ուսադիրներն են, որոնք լինում են՝ 1) կարովի (կիտելի), տեղադրվում են թևքատեղադրման գծից ուսի կարի վրա այնպես, որ ուսի կարը համընկնի ուսադրի երկայնական առանցքային գծի հետ, Ուսադիրը կիսափափուկ, ծգված վեցանկյուն է, երկարավուն զուգահեռ կողմերով, որոնց ներքևի վերջնամասն ուղղանկյուն է: Ուսադիրները մուգ կարմիր մահուդի վրա մշակված մուգ կապույտ գույնի նախշազարդ դաշտով են, եզրերը մուգ կարմիր գույնի մակաշերտով: Կարովի ուսադրի եզրերը, բացի ստորինից, երիզվում են 2,5 մմ լայնությամբ մուգ կարմիր մահուդե գործվածքով: Բարձրագույն դասային աստիճան ունեցող դատախազների ուսադիրներին ոսկեգույն աստղերը ասեղնագործվում են ոսկեզօծ թելով, իսկ վերին ծայրից 15 մմ հեռավորության վրա տեղադրվում է 14 մմ տրամագծով ոսկեգույն կոճակ Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով: Դատախազների դասային աստիճանների տարբերանշանները (ուսադիրներ) կարվում են կիտելի աջ և ձախ ուսակարերի վրա: Արդարադատության պետական խորհրդականի ուսադիրների վրա ասեղնագործվում է ոսկեզօծ հնգաթև աստղ՝ 25 մմ տրամագծով՝ աստղի թևերի միջև ասեղնագործված յոթական ճառագայթներով: Արդարադատության 1-ին դասի պետական խորհրդականի ուսադիրների վրա ասեղնագործվում է 3 ուռուցիկ ոսկեգույն հնգաթև աստղ՝ յուրաքանչյուրը 22 մմ տրամագծով, արդարադատության 2-րդ դասի պետական խորհրդականի ուսադիրների վրա՝ 2 ուռուցիկ ոսկեգույն հնգաթև աստղ՝ յուրաքանչյուրը 22 մմ տրամագծով, արդարադատության 3-րդ դասի պետական խորհրդականի |

| | |
|---|---|
| | ուսադիրների վրա՝ մեկ ուռուցիկ ոսկեգույն հնգաթև աստղ՝ 22 մմ տրամագծով: Բարձրագույն դասային աստիճան ունեցող դատախազների ուսադիրներին աստղերը տեղադրվում են երկայնակի առանցքային գծի վրա: Աստղերը ճառագայթներից մեկով ուղղված են դեպի ուսադիրների վերին եզրը: Բարձրագույն դասային աստիճան ունեցող դատախազների համազգեստի բոլոր տարբերանշաններն ասեղնագործվում են 5-տոկոսանոց ոսկեթելերով: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ООО Канакери кари фабрика в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀԳԴ-ԷԱՃԱՊՁԲ-26/3 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар |
| --- | --- |
| | технические характеристики |
| 23 | |